

կը զգայ, ան պատճառաւ հիւանդու-
թիւն ալ կրնայ գալ տղուն վրայ,
պէտք չէ միտքը չափէ դուրս յոգ-
նեցընել, հապա չափաւոր բան սոր-
վեցընելու է: Շատ անգամ ալ կ'ըլ-
լայ որ տղաք պատանեկութեան ժա-
մանակը յանկարծ կը սկսին մեծնալ
ու հասակ նետել. մկանունքները ա-
ւելի կը հաստընան, կուրծքը աւելի
կը լայննայ, շնչառութիւն աւելի կ'եր-
կըննայ, մորթին վրայ աղուամազեր
կ'ելլեն, ձայնի գործարանները կը
շտկուին ու ձայնը կը հաստընայ,
թւերն ու ծնկուղները կ'երկըննան
ու կ'ուժոյն, արտաքին զգայու-
թեանց գործարանները կ'ընդարձա-
կին և աւելի կ'արթննան. քունը կը
թեթեւայ ու հոգւոյն կարողութի-
ւոյն կարծես թէ նոր կենդանութի
կ'առնեն:

Տղոցմէ ոմանք տասնըհինգերորդ
տարիէն ետեւ չեն աճիր, ոմանք ալ
անոր ներհակ՝ ինչուան քսանուեր-
կուերորդ՝ նաև ինչուան քսանուիրե-
քերորդ տարին կը մեծնան. բայց
ասոնցմէ շատերը նիհար ու բարձր
կ'ըլլան, մկանունքնին տկար, ու սը-
րունքնին վստուժ. միայն թէ քանի
որ տարիքով առաջ երթան՝ պարապ
տեղուանքը մտով կը լեցուին, անգամ
ները կը հաստընան, ջղերը աւելի կը
զօրանան, ու երեսներորդ տարին հա-
սած չհասած՝ մարդս իրեն բնական
կազմութեանը ամենէն կատարեալ
հասակը կը մտնէ:

Հ. Մ. Տ

Ա՛նաստիար կենդանեաց ու բոսորդ օգոստ-
ները:

Ա՛ՆԱՍՏԱՆԻՍ մէջ ամէն բան իրեն
վիճակին յարմար լաւ ու աղէկ է,
ու մէյմէկ բանի օգտակար է. և թէ
պէտ երբեմն փաստակար ալ ըլլայ,
բայց ան ալ կամ գէշ կերպով գործա-

ծելէն է, և կամ ինչ բանի համար որ
ստեղծուած է՝ անոր համար չգոր-
ծածելէն առաջ կուգայ: Ասկէց է
որ մէկ կերակուր մը աս կենդանւոյն
սննդարար է, և ուրիշի մահուան
պատճառ կ'ըլլայ. ան բոյսն ալ որ
շատ անգամ թունաւոր կը սեպուի՝
ուրիշ դիպուածոց մէջ զօրաւոր դեղ-
թափ կ'ըլլայ: Աս բանս յայտնի է մո-
լախինդ՝ ըսուած խոտին վրայ, որ
հին ատենը միայն թոյն կը կարծուէր,
բայց հիմա զանազան փորձերով յայտ-
նի եղաւ որ ասով շատ օգուտներ ալ
կ'ըլլան եղեր:

Ա՛ՆԽԱՐՀՔԻՍ վրայի բոյսերուն թիւն
ու տեսակը խիստ շատ է. բայց ամէնն
ալ մարդկանց համար ստեղծուած
չեն, հապա ոմանք կենդանեաց հա-
մար, ոմանք զարգարանք ըլլալու
համար, շատն ալ բժշկութեան մէջ
գործածելու համար եղած են. և ա-
սոնք կենդանեաց ու մարդկանց հի-
ւանդութեանցը դէմ զօրաւոր դե-
ղեր կ'ըլլան՝ թէ որ մէջը փաստակար
նիւթեր չխառնուին: Այսպէս կըր-
նանք ըսել նաև շատ կենդանեաց
վրայ, որոնք թէպէտ և մեզի փասա-
կար են, բայց ուրիշ կենդանեաց դեղ
ու սննդարար կերակուր կ'ըլլան:

Շատ հաւեր որդերով ու ճճինե-
րով կ'ապրին, որ մեզի շատ փասա-
կար կ'երեւնան. ընտանի թռչուննե-
րուն շատն ալ մամուկ կ'ուտեն. իսկ
սիրամարդն ու արագիլը օձու միս շատ
կը սիրեն: Ասոնցմէ զատ՝ թէ որ մտա-
ծենք թէ ինչ զօրաւոր դեղեր կ'ըլ-
լան թունաւոր բոյսերէ ու կենդա-
նիներէ, ան ատեն արարածոց վրայ
երեւցած Աստուծոյ իմաստութիւնն
ու բարութիւնը արդարացընելու հա-
մար՝ շատ աշխատանք պէտք չըլլար:
Ասկէ զատ հետագայ խորհրդածու-
թիւններն ալ զմեզ աւելի կրնան հա-
մոզել. վասն զի փաստակար բոյսե-
րուն ու կենդանեաց թիւը՝ օգտա-
կարներուն համեմատութեամբ գրե-

Թէ ոչինչ է : Եւ տուած մարդկանց ու կենդանեաց անանկ կարողութիւն մը տուեր է որ անով իրենց փնաս տալու բաները կ'իմանան : Կարձեալ ան կենդանիներն որ փնասակար են՝ մարդէս շատ կը վախնան . ու ինչուան որ մէկը զիրենք չգրգռէ՝ իրենց զէնքերը չեն բանեցըներ : Կարձեալ կենդանիք անանկ նշաններ ունին որ անոնցմով կ'իմացուի իրենց փնասակար կամ օգտակար ըլլալը , և աս նշաններով կրնանք ձեռքերնէն ազատիլ . ինչպէս բոժոժաւոր օձը , որ օձերուն մէջ ամենէն թունաւորն ու փնասակարն է , իրեն պոչին օղակներուն ձայնովը կ'իմացընէ իրեն մօտենալը : Կուրդիլոսը դանդաղ ըլլալուն ու քովընտի դառնալ չկրնալուն՝ ուրիշ կենդանիները իր կատաղութենէն դիւրաւ կ'ազատին : Եւ տուած իր բարերարութեամբը այնպէս կարգ դրած է՝ որ ամէն փնասակար կենդանիք իրենց թոյնին դէմ դեղեր ունին . և իրաւցընէ կարիճին եղը իրեն խայթութեամբին զօրաւոր դեղ կ'ըլլայ . Թէ որ մեղուն ճգմես , ու իր խայթած տեղոյն վրայ շփես , ցաւը կ'անցնի . իժերուն ճարպն ալ իրենց թունաւոր խաժութեամբին զօրաւոր դեղ մըն է :

Կրնայ մէկը ըսել՝ Թէ ալ աղէկ չէր ըլլար որ աշխարհիս վրայ ամենեւին փնասակար կենդանիներ ու բոյսեր չըլլային : Եւ խօսքով մեր տգիտութիւնն ու անձնասիրութիւնը կ'երեւնայ : Թէ որ Եւ տուած ուղեր է որ մէկ արարած մը ուրիշին փնաս ընէ , 'ի հարկէ բարի վախճան մը դիտեր է : Շատ բաներ որ փնասակար կ'երեւնան , ըստ ինքեան այնպէս չեն . վասն զի նոյն իսկ փնասակար կենդանեաց թոյնն ու զէնքերը իրենց համար խիստ հարկաւոր բաներ են . աս ըսածիս ճշմարտութիւնը մեղուին վրայ կ'երեւնայ . անանկ որ եթէ մեղուին խայթոցը փրցընես հանես , քիչ ատենէն ան մեղուն կը սատկի . անոր համար է որ մեղուն զմէկը խայթելէն ետեւ ինքն ալ շատ չապրիր՝ կը սատկի , ու

րովհետեւ իր խայթոցը աղեացը հետ խայթութեամբին մէջ կը մնայ : () Զերու համար ալ խիստ հարկաւոր է իրենց թոյնը . վասն զի ասոնց բնութիւնը շատ պաղ ըլլալով , միայն իրենց թոյնովն է որ կերածնին կրնան մարսել : Եւ այսպէս իմանալու է նաեւ ամէն տեսակ թունաւոր կամ փնասակար կենդանեաց ու բուսոց վրայ . և ընդհանրապէս պէտք է գիտնալ Թէ ան բանն որ բնութեան մէջ փնասակար կ'երեւնայ , այնպիսի օգուտներ ալ ունի որ ըստ ինքեան պէտք էր որ բնութեան մէջ գտնուէր . ապա ուրեմն մարդս ինչպէս կրնայ յանդգնութեամբ դատաստան ընել բնութեան մէջի աղէկ ու փնասակար բաներուն վրայ : Եւ ըսեր է որ աս աշխարհիս մէջ երբեմն երբեմն նեղութիւն ու նենալը աստուածային իմաստութեմբէն . կամ Թէ փնասակար բաներն ալ մեզի շատ անգամ օգտակար չեն կրնար ըլլալ . մանաւանդ որ շատ անգամ բնութեան մէջի փնասակար կենդանիները միայն ըստ դիպաց փնասակար են , ու Թէ որ մենք անոնցմէ վընաս մը քաշենք՝ գրեթէ միշտ մեր անխոհեմութենէն է :

Եւ խորհրդածութիւններն ընելու ժամանակ ամենեւին չենք կրնար մոռնալ նաեւ մեր երանաշնորհ Լոյսիկ վարդապետին զուրցածները , որ մասնաւորապէս աս նիւթիս վրայ կը խօսի իրեն գործոց առաջին գրքին մէջ . որ Թէ ուղիղ փիլիսոփայութեան , Թէ ազգու ճարտասանութեան և Թէ գեղեցիկ հայկաբանութեան մի միայն օրինակ կրնայ սեպուիլ :

Յ . Գ .

ԻնՈՒԹԻՒՆԸ իր ունեցած աղէկութիւններովը կ'իմացընէ Թէ պատկեր է Եւ տուածոյ . իր պակասութիւններովն ալ կը ցուցընէ Թէ միայն պատկերն է Եւ տուածոյ :

ՓԱՍԿԱՆ